

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՏԵՂԱԿԱԼ  
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Աղաբեկյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Օրենքի նախագծով երկքաղաքացու կարգավիճակ ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինապարտության խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկվող լուծումներն ընդհանուր առմամբ ապահովում են պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության կրկնակի գորակոչի բացառումը: Սակայն երկքաղաքացու կողմից զինվորական ծառայություն անցնելու երկրի ընտրության իրավունքը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված պրակտիկային, քանի որ երկքաղաքացին, որպես կանոն, զինվորական ծառայությունն անցնում է այն պետության տարածքում, որտեղ

մշտապես բնակվում է և զինվորական ծառայություն անցնելու երկրի ընտրություն կատարելու իրավունք ունի միայն այն դեպքում, երբ գտնվում է երրորդ պետության տարածքում, որի քաղաքացին չի հանդիսանում:

Ուստի, կարևորելով երկքաղաքացու կարգավիճակ ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինապարտության հետ կապված հարաբերությունների հստակ կարգավորման անհրաժեշտությունը, առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածները միավորել ու շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՌԲՎԱԾ 1. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 օրենքի 3.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, եթե այլ պետությունում անցել է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն»:

Ելնելով վերը շարադրածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  
և

լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
/սյսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման  
ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման  
ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի  
նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության  
գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման  
համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը բյուջետային բնագավառում թե նուսքերի և թե ելքերի գծով կարգավորման ազդեցության չի հանգեցնում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  
և  
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
վերաբերյալ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  
և  
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
վերաբերյալ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխության և լրացում կատարելու մասին»  
ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության  
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու  
մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային  
միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել  
են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման  
դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա  
ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագծով  
կարգավորվում են երկքաղաքացիների զինապարտության հետ կապված  
հարաբերությունները:*

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման  
աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու  
եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության  
գնահատման

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության  
գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային  
շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում  
մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության  
գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի  
ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու*  
եզրակացություն:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

**Հոդված 1.** «Զինապարտության մասին» 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 Հայաստանի Հանրապետության օրենքի 3<sup>1</sup> . հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն:»:

**Հոդված 2.** Օրենքի 3<sup>1</sup> -րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր կետով՝

« 4.Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին պարտադիր զինվորական ծառայություն անցնելու երկրի ընտրությունը կատարում է իր որոշմամբ:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### «Զինապարտության մասին » ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է երկքաղաքացիների զինվորական հաշվառման եւ զինվորական ծառայության հետ կապված խնդիրները կարգավորելու անհրաժեշտությամբ: